ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **14/մարտի/2025 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...10... անդամներ:

Բացակա էին՝ ---Խաչատրյան Գոհար, Բարսեղյան Հրաչյա,---
---Ավետիսյան Պետրոս, Հովսեփյան Ատշոտ.---:

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին</u> համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ստեփանոս Վարդանյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը:

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը՝

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

1.3 Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----10---- *Դեմ*---------0--------- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի համաձայն և հաշվի առնելով համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------*10*---------- *Դեմ*----------*0*---------- *Ձեռնպահ*----------*0*----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-ին հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------*10*---------- *Դեմ*----------*0*---------- *Ձեռնպահ*----------*0*----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----10---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ Վահագն Արսենյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____